ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ԱՅՍ ՕՐԸ

*Ժամանակի մասին խորհրդածելը յուրաքանչյուր մարդու բնական վիճակն է: Անկախ որևէ դեպքից կամ առիթից մարդն ակամայից հաճախ է անդրադառնում իր ապրած կյանքին, ցանկանում վերարժևորել և փորձում սրբագրել սխալները, իմաստավորել այն, ինչ որ Ավետարանի լեզվով կոչվում է «համար տնտեսություն», հայացք է նետում անցյալի վրա, ձգտում այն ներդաշնակել ներկայիս և գինավորվել՝ դիմագրավելու գալիքի անհայտները: Ժամանակի անեզր տիրապետության հետ հարաբերության մեջ լինելով, մարդն իր հախուռն և փոթորկոտ խառնվածքով ձգտել է ըմբոստանալ այդ ամենազոր և անսպառ ուժի դեմ, ճգնել հնազանդեցնել նրան և նաև այստե՛ղ հաստատել իր մարդկային իշխանությունը: Իսկ ժամանակը լուռ համաձայնվել է այդ տվայտանքներին...*

*Չլինելով արարչագործության հեղինակն ու կարգավորողը, մարդը բանականությամբ փորձել է նաև իր հնազանդեցնող պարանն օղակել անսահման տիեզերքի պարանոցին՝ ոչ թե ընդառաջ գնալով, այլ տիեզերքը դեպի իրեն ձգելով, իսկ հետզհետե մոտեցող քայլերի տարածությունն անվանել ժամ, որպես, վայրկյան... և այդ հանդիպման ու ներդաշնակման կետը կոչել Նոր Տարի կամ Տարեմուտ: Այս ձգտումը մարդու աստվածադիր ներաշխարհից բխող վերաբերմունքն է՝ ուղղված դեպի նորն ու նորոգությունը, այն դարձնելով իր համար մխիթարության, սփոփումի, արժևորումի, գնահատումի, դադարի և ապա նոր ուժով աշխատանքի մի ցանկալի առիթ:*

*Արարածի կողմից այս որոնմանը չուշացավ նաև Արարչի պատասխանը՝ Իր Միածին Որդուն պարգևելով աշխարհին: Արարածի կողմից ստեղծագործած Նոր Տարին կատարելացավ Արարչից ընծայված Նոր Դարով:*

*Ս. Ծննդյան սքանչելի ավետիսն է դա, որ հրեշտակների երկնային մեղեդիով և պարզ հովիվների վկայությամբ հնչում է մինչև այսօր: Բեթղեհեմյան մսուրի երկնքում ճառագած Աստղը ահա երկու հազար տարիներ ի վեր երբևէ կանգ չառավ և շարունակում է ճառագայթել: Այն իր թևերը տարածել է աշխարհի չորս ծագերը, բայց դրանից առավել ուղղել մեր ներաշխարհը, Աստվածորդու Ծնունդով աստվածորդուն ծնելու՝ «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա» (Աթանաս Ալեքսանդրացի): Մեծ է Բեթղեհեմի փոքրիկ ու անշուք մսուրում կատարվածի խորհուրդն ու փայլը: Աստուծո այս ընդառաջումը ամեն ինչից առավել նոր մտածողության ու նոր կյանքի սկզբնավորումը եղավ, որը մեր Տերն Ինքն իսկ նշանավորեց՝ ասելով. «Ես եկա, որ կյանք ունենան և առավել ևս ունենան»:*

*Այս պահին մենք չենք ուզում ո՛չ վերացական, մտահայեցողական վերլուծումներ կատարել ժամանակի և տարածության ու ո՛չ ճառել քրիստոնեության գաղափարական վեհության ու բարոյական կատարելության մասին: Այլ պարզապես Գարեգին Ա Վեհափառի Ս. Ծննդյան պատգամում հնչած խոսքով ասած «Աստված մեզի հետ է այսօր: Սա ինձ համար և վստահ եմ՝ ձե՛զ համար կենդանի հավատք է, մեր բոլորի գոյությանը հետ շաղախված համոզում է և*

*ապրում միանգամայն: Աստուծո մեզ հետ ըլլալու գիտակցությունը առավել ևս ուժեղ և ներգործոն կդառնա մեր մեջ երբ մենք հատուկ ճիգով ջանանք մեր գերագույն կարելին ընել որպեսզի մենք ըլլանք Աստուծո հետ»:*

*Հիսուս ծնվեց մարգարեական այն կանխասացությամբ, որ պիտի «ծնվի խաղաղության Իշխանը», որ «Նրա անունը պիտի լինի Էմմանուել՝ այսինքն Աստված մեզ հետ է», որ պիտի լինի «երկրում խաղաղություն, մարդկանց մեջ հաճություն» և սիրո անսահմանություն: Մարդը սպասում էր այս հաստատումներին:*

*Առաջին հայացքից թվում է, թե մեր Տիրոջ առաքելությունը չհաջողվեց, որովհետև այսօր էլ պատերազմները ու անհաշտությունները շարունակվում են, երկիր մոլորակի վրա գրեթե չկա մի անկյուն, որտեղ չթևածեն սպանությունն ու ինքնասպանությունը, դավաճանությունը, ատելությունը, անարդարությունը, սովը, աղքատությունը, գործազրկությունը և այլ չարիքներ ու դժբախտություններ: Հակառակ գիտական բոլոր նվաճումների, քաղաքակրթության և մարդկային մտքի հետզհետե նորանոր գյուտերի, այդ բոլորը չեն դադարում: Մարդն այսօ՛ր ևս սպասում է, բայց ինչպե՞ս: Մի՞թե Աստված իր ամենազոր գիտությամբ չգիտեր, որ հենց այսպես էլ լինելու է: Գիտե՛ր և ճիշտ այդ պատճառով էլ Հայրական չցամաքող սիրով այս անգամ վճռական կերպով միջամտեց մարդկության կյանքին՝ Իր Միածին Որդուն պատարագելով նրա համար: Մեր Տերը մարդեղության օրերին իսկ ներքին ցավ և տառապանք էր ապրում ոչ միայն այդ ժամանակի, այլև ապագայի համար, մինչև անգամ արտասվելու աստիճան: Վկայում է Հովհաննես Ավետարանիչը. «Շատերը հավատացին Նրա անունով, քանի որ տեսնում էին այն նշանները, որ կատարում էր: Բայց Հիսուս չէր հավատում նրանց...որովհետև կարիք չկար որ որևէ մեկը վկայեր մարդու մասին, քանի որ ինքն արդեն իսկ գիտեր, թե ինչ կար մարդու մեջ» (Հովհ. Բ 23-25): Այսուհանդերձ Նա գնաց դեպի զոհաբերության բարձրունքը, նվիրեց Իրեն խաղաղության և սիրո հաստատմանը և այդ Խաչի ճանապարհին բարձրաղաղակ հրավիրեց բոլորին՝ ասելով, թե «Դեպի ինձ եկեք բոլոր հոգնածներդ ու ծանրաբեռնվածներդ, և ես հանգիստ կպարգևեմ ձեզ»: Դարձյալ Աստված է առաջին քայլն անողը, և մենք՝ դեռ սպասողները: Պատկերավոր կերպով սա նման է այն վիճակին, երբ քաղցած և սովահար նստած ես խնջույքի սեղանի առջև ու չես ճաշակում և դեռ մեղադրում ես նաև, թե ինչո՞ւ քեզ հյուրասիրողը չի ուտում քո փոխարեն և եթե նույնիսկ սկսի ուտել, այս անգամ դժգոհում ես, թե ինչո՞ւ ե՛ս չեմ հագեցնում: Այսօր այդ խնջույքի սեղանը իր անանցելի ուտեստեղեններով՝ հավատք, հույս, սեր, խաղաղություն, բացված է մեր առջև: Կրավորական կեցվածքով չարհամարհենք, այլ ներգործուն մասնակցությամբ սնվենք, սնունդ տալու համար:*

*Անցավ ևս մեկ տարի, վերստին ունկնդիր եղանք հրեշտակների Ս. Ծննդյան ավետիսին, հովիվների հետ զարմացած ու հիացած հետևեցինք Աստղի ծագմանը, սակայն մոգերի պես երկրպագեցի՞նք ու ընծայաբեր եղա՞նք Աստուծո մեզ հետ լինելությունը վկայող Մանկան մսուրի առջև: Այսօր հերթը մերն է Աստուծո հետ լինելու:*

*Անցյալ տարին, սակայն, չի սահմանափակվում միայն անցյալ տարով: Այն իր մեջ բովանդակում է ամբողջ 1996 տարիները՝ իր լավ ու վատ կողմերով: Եվ տարիների շղթայական փոխանցումը դառնում է պարզապես ներկայի արձանագրությունը՝ այսինքն քեզ բաժին հասած ժամանակահատվածում ինչպես ես*

*վերաբերվել նախորդների թողած ժառանգությանը: Ուրեմն այսօր մեր ուսերին է ծանրացած ոչ միայն անցնող տարին, այլ անցած շուրջ 2000 տարիները: Ներկայիս կյանքի մարտահրավերներն ու դժվարությունները սոսկ անցյալ տարվան չեն պատկանում: Ունենք եկեղեցական ու պետական լուծման կարոտ բազմաթիվ հարցեր: Այստեղ չենք ուզում մտնել մանրամասնությունների մեջ քննարկելու առաջադրված հարցերի պատմական պատճառները, վերլուծել դրանք և ընդհանուր գծերով ներկայացնել այն, ինչ բազմաթիվ անգամներ ներկայացվել է: 1997-ը նկատենք որպես այդ բոլորի մեջ հետ հանդիպման վայրը, դեմ հանդիման զգանք անցյալին և ձգտենք այս տարին ոչ թե սոսկ ավելացնել, այլ դարձնել կրողն ու ուսամբարձը նախորդ տարիների:*

***

*Այս բոլորի իրականացնողը երկրից դեպի երկինք վերելության դարձավ Եկեղեցին ընդհանրապես, և մեր կյանքում մեր դիմագիծն ու տեսքն ստացած Հայ Եկեղեցին: Այն վերածվեց մի պատվարի բոլոր եղնեյի ու աներևույթ թշնամիների դեմ, լինելով մի խաղաղ նավահանգիստ զանազան խռովահույզ ալրումների:*

*Այսօր դեպի 1700-ամյա երիտասարդացող հնությունը գնացող Հայ Եկեղեցին է կանգնած մեր առջև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով: Այժմ մե՛նք ենք պատասխանատուն նրա թե՛ տկարության և թե՛ հզորացման:*

*Եվ Մայր Աթոռիս միաբանությունը, ի գլուխ ունենալով Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը, լծված է այս Ս. Ծնունդը իրական վերածննդի վերածելու սրբազան առաքելության:*

*Այսօր Ս. Ծննդյան քաղցրաղողանջ հավիտենական նոր պատգամը խառնելով մեր կյանքին չթողնենք, որ այն վերածվի հեռավոր Բեթղեհեմում տեղի ունեցած ինչ-որ դեպքի, այլ ըմբռնենք, որ «Արարչագործության ժամանակ արարվեցինք Աստծո պատկերով, իսկ այսօր մի ենք Նրա հետ, այն ժամանակ Աստված հրամայեց տիրել երկրին ու կենդանիներին, իսկ այսօր բարձրացրեց մեզ երկնքից էլ վեր, այն ժամանակ որպես բնակության վայր դրախտը պարգևեց, իսկ այսօր՝ երկինքը բացեց, այն ժամանակ մարդն արարվեց վեցերորդ օրը, որով և պիտի ավարտվեր արարչագործությունը, իսկ այսօր ծնվեցինք առաջին օրը՝ ինչպես լույսն էր ամեն ինչից առաջ» (Հովհ. Ոսկեբերան):*

*Կյանքի այս վազքարշավի մեջ պահն է թոթափվելու դաղարի, վերագտնելու և փայլեցնելու համար կամաց-կամաց տեղատվություն ապրող իրական արժեքները: Պահն է մեր ձեռքը մեկնելու դեպի մեզ երկարած Աստուծո ձեռքը:*

---

Ծանուցում. – *«Էջմիածին» ամսագրի խմբագրութիւնը հայցում է ներողամտութիւնը իր բոլոր ընթերցողներին ամսագրի այսքան ուշ հրատարակութեան համար:*

*Հայտնում ենք, որ այս պարագան կապված լինելով ինչ-ինչ դժվարութիւնների և նոր ձևավորված խմբագրակազմի աշխատանքների կազմակերպման հետ, Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինութեամբ և նախանձախնդիր հովանավորութեամբ իր լուծումը գտել է և մենք այլևս դժգոհ չենք թողնի մեր ընթերցողներին: Այսու մեր ցանկութիւնն է նաև «Էջմիածին»ը դարձնել մեր ժողովրդի բոլոր զավակների՝ ամենացածրից մինչև ամենաբարձր խավերի հարազատ ամսագիրը, որի համար հաճելի և օգտակար կլինեն լսելու բոլորի ձայնը, դիտողութիւնները, առաջարկները, նկատառումները և վերաբերմունքը թե՛ ամսագրի և թե՛ այսօրվա զանազան հարցերի մասին:*